



ԷՇՄԻԵՆԻ ԱՎԵՏԱՐԱՆ 1000 ՏԱՐԻ

ԱՐՏԱԶԵՍ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԷՇՄԻԱՆԻ ԱՎԵՏԱՐԱՆԸ*

• •

Զեռագրի առաջին կազմը փոխարիմ-
ված է նոր՝ փողումբյա կազմով, ինչպես
նաև հարատացված միմյանց կից երկու
նկարագարդ թղթերով, որոնք, ինչպես
ցուց է տախու ուսումնամիրությունը, ձե-
ռագրին միացել են հետագայում: Որ նը-
րանք ավելի հին են, քան ձեռագրի
ստեղծման ժամանակաշրջանը, վաղուց
հայտնի է: Բայց որ այդ կազմն ու ման-
րանկարները Սուեֆանոս կրոնավորը չի
տեսել իր ստացած ավետարանի վրա, և
որ դրանք հետագայում են մուծվել ու կըց-
վել ձեռագրին, կիամոզվենք թիւ հետո:

Զեռագրի կազմի երկու փեղկերից յու-
րաքանչյուրն ունի փողումբյա քանդակա-
գարդ մինչդ սալիկ, մեկական կենորոն-
ներում, երկուական (մեծերը) զբաղեց-
նում են կազմի վերին և ստորին մասերը
ամրողությամբ, իսկ մյուսները՝ կենորո-
նական սալիկի բարձրությամբ՝ նրա աջ և
արյակ կողմերը: Այս ուժ քանդակագարդ
սալիկները տերումական թեմաներ ունեն:
Երկու փեղկերի վերին սալիկների կենոր-
ոնում Քրիստոսի չարչարամբները խոր-
հըրդանշող խաչն է, դադինապակի մեջ,

որը երկու կողմերից բռնել են հրեշտակ-
ները: Վերին երկու անկյուններում մեկա-
կան մարդկային դեմքեր են, որոնցից մեկն
ունի ճառագայթաձև, մյուսը՝ կիսապրամա-
ծել թագ: Սրանք մարմնավորում են Սրբն
ու Լուսինը:

Առաջին փեղկի կենորոնում Աստ-
վածամայրն է՝ գամին բազմած, մասովկ
Հիսուսը գրկին: Տիրամոր կողքերին
երկու հրեշտակներ են կանգնած՝ ձախ
ձեռքում գավազան, աջը կրծքին՝ ափով դե-
պի դրու: Նրանից աջ, փեղկի վերին մա-
սում Ավետառն է, առորինում՝ Զաքարիան
և Եղիսաբեթը: Զախ փեղկում՝ Ծննդը,
ապա՝ Աստվածամոր ճամփորդությունը:
Ներկի սալիկի վրա՝ Մոգերի երկրպագու-
թյունը:

Երկրորդ փեղկի կենորոնում Քրիստոս
է՝ բազմած գամին, ձախ ձեռքում ավե-
տարան, աջ ձեռքը՝ քարոզի պահ: Թիկոն-
քում երկու առարյամբներ (Պողոս, Պետրոս)
են՝ Աստվածամոր կողքերին կանգնած
հրեշտակների դիրքով: Քրիստոսից աջ՝
ջրգոյի, նրանից մերքն՝ լուսնուի բուժումն
է, ձախում՝ դիվահարների, ապա՝ անդա-
մակոյծի բուժումը, մերքնի սալիկի վրա՝
Քիսատոսի հանդիսավոր մուտքը Երուսա-
ղել:

Փեղկերից յուրաքանչյուրն ունի $30,8 \times$
37 սմ մեծություն: Մալիկները՝ 0,9 ալ

* Զարունակված «Էջմիածն» ամսագրի 1990 թ.
№ Ա-ից:

Բաստություն: Սալիկները եղբափորված և ագուցված են միմյանց, ապա ամրացված մետաղյա գամերով, որից հետո սուրճառվ փակցված են համար մագաղաքի վրա՝ վերջինիս ներսի երեսի կողմից: Մագաղաքը երեսապատված է զոլափոր կտուիով: Երկրորդ փեղկի վերին սալիկի աշխարհությանը կոտրված է (4,4 ամ երկայնությամբ և 2,2 ամ լայնություն): Մյուսներն ամրողական են:

Կազմի փեղկերը թիկնամասում, որտեղից դառնաք պետք է միմյանց միանան ձեռագրի թիկունքի միջոցով, ունեն չորսական անցք: Ակավելով երկու ծայրերից 4,5 սմ խորքից, 9,2 սմ միջնատարածությամբ ծալիված են չորս անցք: Այսին

4,5 9,2 9,2 9,2 4,5
Դրանցից բացի, փեղկերը մեկական անցք
ունեն թիկունքին հարող ճակատամասից,
որտեղից նոյնպես պետք է ամրանան
ձեռագրին, որպեսզի կազմերն ավելի ա-
մուր լինեն և չպոկվեն ձեռագրից:

Թիկնամասից քաջի, փեղկերն առաջիցից:
Թիկնամասից քաջի, փեղկերն առաջա-
մասում ունեն երեքական անցք՝ կազմերի
փականների համար³⁹:

³⁹Մի փոքր տեղեկություն միջնադարյան կազմ-
արվեստի վերաբերյալ: Ըստօրինակությունը պարկ
առ պարկ ավարտվելոց, լուսանցագործությունները,
նկարագրությունը վերջաննալուց և հիշատակարանը
գրվելոց հետո միայն ձեռագիրը բանձնադարձվում
էր կազմեու:

Կազմելու առաջին գործը պրակտիկի կամ փեր-
թիվի իրար Բնու կարելմ էր, որևէ արվուժ էր դազ-
գամի վրա:

Ամոր թելից սարքված պարանի այն մասը, որի վրա հավաքվում ու աժրացվում է պրակը, կոչվում է սերել (այս թել), դուրս մնացած ծայրերը, որոնք առանձապահ են կազմութափակին, կոչվում են պատրուպա:

Դազգահի վրա սիրելու պիտին ամբաջնելոց հետո, ամեն մի պրակից այս դիմաց անցը էր բացվում, որից թեև դրսք գալով՝ փաթաթվում էր սրբաթիշ վրա և կրկին պրակ դառնալով՝ նոյն գործողությունը խառապում էր Բատոռը սենթին մեն...

Բացի այս սեփականից, կապահովը իրավ միանում
և նաև ծայրերում: Դայրամերձ սեթելի անցքից
թիվով միանում և նայում է հյուսած սեթելին, որը
կոչվում է՝ բարձիկ: Սա իր մերժման միանում է:
Թիվանամասի կաշվին ամրացված հյուսածո սեթելի
են, որը կոչվում է կապտալ, և միափն ամրաց-
վում կազմակատակին: Վերջինիս վրա արված
անցքի և փորվածի օգնությամբ: Մինչ այս, եռյա-
կալանակով կազմուախտակին միացվում էին սեթե-
լերով աստրուգաներով և կաշեպատկում:

Էջմիածնի պալետարանի կազմի վերջին
փեղկի պատրուգները 1920 թ. կորել են
ձեռագրի նախահանությամբ հրատարա-
կելու համար լուսանկարելիս, որի հետե-
վաքով ձեռագրի թիկնամասը բաց է:
Փեղկերի վրա եղած անցքերին համապա-
տասխան չորս սեղելերի վրա հավաքվել
են մագաղաթյա պրակներ, ընդ որում
սեղելերի դիմաց անցքերը բավականին
լայն են, քանզի սեղելերը հասու են:
Իրանցից բացի, պրակները ամուր թելով
կրկին իրար են կարվել եղբարին սեղելի և
ծայրերի. մեջտեղից: Բոլոր սեղելերի
պատրուգները անցկացվել են փողոսկրի
անցքերից և ամրացվեն, իսկ ամուր թելի
ծայրերը՝ ճակատամասը անցքին (կապ-
տափ փոխարեն): Ձեռագրի թիկնամասի
քննությունից պարզվեց, որ պալետարանի
թիկնամասում, փողոսկրե կազմին հարմա-
րեցված մասում, հիշյալ սեղակերից ու նը-
րանց անցքերից բացի, բոլոր պրակների
վրա կան նրանցից փոքր սեղելային անց-
քեր այսպիսի հաջորդականությամբ. երկու
ծայրերից 5,5 սմ հեռավորությամբ տեղա-
վորված են մեկական անցք, իսկ սրանցից
ամեն մեկից 12 սմ հեռավորության վրա՝
մի անցք: $(5,5+5,5)+(11,7+11,7)=35$ ամ:

Այս հշանակում է, որ փողոքի կազմից
առաջ ձեռագիրը կազմված է եղել։ Ուրեմն
փողոքից կազմը Էջմիածնի ավետարածի
երկրորդ կազմն է։ Այսպիսով ավետա-
րանն իր կազմն է կորցրել, փղուկյան
կազմը՝ իր ավետարածնը։ Ձեռագրի առա-
ջին կազմի անցքերը չեն համապատա-
խանել փղուկյան կազմի վրա արդեն գո-
յություն ունեցող անցքերին, ուստի նրա
վրա նոր սեթնակին անցքեր են պատրա-
ստել նոր կազմին համապատասխան, իսկ
նախորդ կազմի անցքերը մնացել են որ-
պես առաջին կազմի գոյության իրենքն ապագուգ։

Սովահն կազմի սնթելային անցքերի գոյությունը մի անգամ ևս հասնառում է շատ կարևոր մի իրողություն։ Սորմիգովուկին ժխտում էր Էջմիածնի ավետարանի առաջին ութ թերթերի Ավարեների 10-րդ դարին պատկանելը, ինչպես նաև դրանց համական ծագումը։

U. Տեր-Ներսեսյանը, նենվելով բազմաթիվ հոշարձանների և գրական սկզբանբարութերի, վրա, հիմնավորապես ներքում է սույն անհիմն տեսակետը և ապացուցում, որ դրանք հայկական են և ձեռագրին ժամանակակից: Զեռագրի կազմի քանությունը ցուց տվեց, որ առաջին կազմի սերելային անցքերը պահպանվել են նաև Եղմիածնի պահպանի առաջին ուժությունուն առաջական առաջարկություն:

թերթերի վրա: Դա անհերքելի ապացույց է, որ դրանք եղել են միջն ձեռագրի առաջին կազմը, այսինքն՝ Ակադեմիայի վեհական ձեռագրի գրության ժամանակ, 989 թ.:

* * *

Երբ կարող էր Ստեփանոսի ձեռագրի կազմը փոխված լինել: Ինչպես տեսանք, Ստեփանոս կրոնակիրը առույթ և ինն օրինակներից ուսումնական և քազմացման նպատակով ավետարանն ըստօրինակել, սովորական կազմով կազմել և նվիրել էր Նորավաճքի դպրոցին, ինչպես սովորաբար արքուն էր: Նորոգման կամ կազմափոխության մասին որևէ հիշատակություն չհնանեք ձեռագրուն: ԺԲ դարի Ազգբներում այս դեռևս Բյանն Նորավաճքի՝ Ս. Ստեփանոս Նախավկայի վաճքի սեփականությունն էր, ինչպես վկայում է այդ ժամանակաշրջանին հատուկ գրությամբ գրված հիշատակագրությունը: «Յանուն Սատուծոյ եւ Տիրատիկին, աղախին Քրիստոսի միարանեցայ սուրբ Նախավկին»:

Այլ զի եւ ես Տիկնաց, աղախին Քրիստոսի, միարանեցայ Նախավկային: Յայս արք ի հետ, զին մեր կարողություն իննի, ծառայութիւն առնենք սրբու»⁴⁰:

Գրությունը հին բոլորգիր է ԺԲ. դարավերջում կամ ԺԲ. դարակզրում գրված: Հիշատակված Ս. Նախավկայի վաճքը Բյանն Նորավաճքն է:

Այս հիշատակագրությունից անմիջապես հետո, 1178 թ. մագաղաքյա ձեռագիրը Ս. Ստեփանոս Նախավկայի վաճքին նվիրելու մասին եղած հիշատակագրությունն է: Նշանակում է, նախորդը գրված է միջն 1178 թվականը, ուստի ձեռագիրը այդ ժամանակ կամ դրանից առաջ է հանվել Բյենն Նորավաճքից: Իսկ այդ ժամանակ, իսկապես, Սյունիքում կարևոր իրադրություններ են տեղի ունեցել, որոնք չեն կարող Ստեփանոսի ավետարանը թողնել Բյանն Նորավաճքում:

Բաղաց թագավորության վերացման և Սկսական տոհմի վերանալուն նվիրված պիտու Ստ. Օրբելյանը գրում է, որ Մելիքշահի 2 Տորթման զորավարը 553 (+551)–1104 թ. գրափուն է Որոտանը, իսկ 1105 թ.՝ Բյենը: «Վաճեթերի բոլոր միարանությունները լուցին պաշտամունքային արարողություններից... Սաստիկ սօի մեջ ընկան Հայատանի բոլոր եկեղեցիներն ու քրիստոնեաները: Բայց Բաղարերը... Ըլորու-

տը և հինգ այլ թերթեր մնացին անհնվաճ: Այս երր լրացավ վեց հարյուր թվականը և սկսվեց առաջին տարին, — (601+551=1152), — շարունակում է Ստ. Օրբելյանը, — Ըլորուտ թերթը կողովունց թուրքերի ճարպիկ ցեղը... Վեց հարյուր տասները (619+551=1170) թվականին Աստված կրկին բարկացավ մեր հաղաց աշխարհի ու Սյունիաց հահանգի վրա և բոլորի ապավեն ու ապաստան անառիկ Բաղարերդ ամրոցը մատնեց Խամայելի՝ անհծոյալ ու գիշակեր մարդու ձեռքը, որը բազմաքանակ զրյուղով եկավ, բայց չկարողացավ նշինչ անել: Այնունետև խարեւական խուքերով խարեց, աշաղվացի պարզամիտ քիստունյա մարդկանց ունեցած միջոցով նայս գրավեց Կեոց քարը, ապա գիշերը նույն մարդկանց միջոցով հափշտակեց և Բաղարերդը, որը գրավելով սաստիկ կոտրած կատարեց: Եվ քանի որ այն անհայտահարելի ամրություն ուներ, բոլոր վասներից ախտել էին կոտակել սրբությունները, գրեթե, եկեղեցական սպասարները, առավելապես Տաթևի փարթամ ու հարուստ աշոռոյի անհամար և անհնան սրբություններն ու եկեղեցական սպասարները, ուսկ և արծաթե խաղերը, հիշատակայի իրերը՝ զարդարված անգին ակնեղեններով, անհամար մարգարիտներով:

Այսուել ամբարված էին շատ կտակա բանեներ՝ թվով ավելի քան տասը հազար: Դրանք բոլորն ել գերի տարվեցին և ցիր ու ցան եղան երկրի երեսին:

«Տաթևի փարթամ ու հարուստ աշոռոյի մեջ էր մտնում նաև Բյենն Նորավաճքը, և նրա ավետարանը չէր կարող Բաղարերում ամբարված «քվու» ավելի քան տասը հազար» կտակարանների մեջ չըգտնվել, որոնք բոլորն ել գերի տարվեցին և ցիրուցան եղան երկրի երեսին:

Տասը հազար ձեռագիր... տասը հազար ճակատագիր... Եթե գերված է եղել, փըրկագնվել է, իսկ եթե ոչ, փրկվել՝ երշամիկ ճակատագրով՝ երկրի երեսին ցիր ու ցան տասը հազարից մեկը Ստեփանոսի ավետարանը:

Այդ ժամանակի դեպքերից հետո միայն ավետարանը փրկվել և ամենայն հավանականությամբ վերակազմվել է փողուկորյա կազմով և (1173 թ.) վաճառվել: «Եթուականութեան Հայոց ՈՒԲ (1173) եւ ի տերութեան աթարակ Ալինկային, եւ ի հայրութեան Գոհան(րո), եւ Գուրծի որդի Վահրամայ, գնեցի իմ հայպ Աշից

⁴⁰ Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Երևան, 1986, էջ 279–280:

զուրք Աւետարանս, և տի մեծամոչակ վաճառ Մաղարդիս, ի Սուրբ Նախավկայս, ի իշխանակ ինձ և ծնողաց իմոց, որդոց իմոց և ամուսնոյն իմոյք⁴²: Վահրամի որդի Գուրծին մեծամարտուստ է եղել: Սպառում է հաջորդ հիշատակագրություննեց. «Ես՝ Գուրծի որդի Վահրամայ, հրաման առի (ի) հոչակաւոր և ի մեծ վաճառն Մաղարդին Սուրբ Ստեփանոս Նախավկայս՝ վաճառ շինելոյ, ո շինեցի զթիգապառակիս վաճառ»: Գուրծին, որ կարող էր մի ամրող վաճք կառուցել, ուրեմն կարող էր նաև փոխակրյա կազմով և գեղեցիկ զարդարված ավետարան գնել և նվիրել Մաղարդա «մեծ վաճացն»:

8-րդ թերթում, որի վրա գրված է Վահրամի որդի Գուրծու հիշատակարանը, գրություննեց առաջ և հետո որոշ փոփոխություններ են տեղի ունեցել: Խճախեն նշել ենք, այդ թերթի առաջին էջում նկարված է Սքրամամի զոհաբերության տեսարանը, իսկ երկրորդ երեսը, որ անգրել էր, վերին մասում ունի Տիրատիկնոց և Տիկնացի՝ Նախավկայի վաճքին միաբանելու փոքրիկ հիշատակագրությունները: Սքրամամի զոհաբերության նկարում նախակի նկարը վտանգվել է, ուստի նկարի հակառակ էջում 11 սմ երկարությամբ և 4 սմ լայնությամբ մագաղաթով նորոգվել է, այսինքն՝ մաքոր մագաղաթով ծածկվել է երեսը, իսկ ա երեսում հարդարվել է խաթարված նկարը:

1173 թ. Գուրծու որդու հիշատակարանը գրվել է նաև այլ կարկատանի վրա: Ուրեմն թերթը կարկատվել է գրելուց առաջ: Գործու հիշատակարանը գրելուց հետո Սքրամամի դեմքը նկարի վրայից կտրել հանել են. տեղը դատարկ է: Մյուս էջում, դեմքի հակառակ կողմում դրոշմված «Գրիգո(րո)» անվան «ըր» տառերը նույնական կտրվել են: Ուրեմն Սքրամամի դեմքը կտրվել է Գուրծու 1173 թ. հիշատակարանը գրելուց հետո:

Ինչո՞ւ է դիմագրկվել Սքրամամը:

Սքրամամը իր կին Սառայից որդի չեր ունենում: Կնոշ համաձայնությամբ նա իր աղախին եղիպտացի Ագարից ունենում է մի զավակ, որին անվանում են Խամայի: «Եւ նա եղիցի այլ վայրագ», գուշակում է տիրոջ հրեշտակը:

Խամայիլլ համարվում է արար ցեղերի հախահայրը, և նրա անունով միջնադարյան հայ հեղինակները արաբներին հաճախ անվանում են «խամայելացիներ» կամ «ա-

ղախնածին հագարացիներ»: Խամայիլլ Մուհամետին նախորդած մարզարեներից մեկն է համարվում, ուրեմն խամայելացիներ են նաև ողջ մահներականները:

Տասներեկուերորդ դարի սկզբից նրանք հաճախակի հարձակումներ են կատարում բաղաց թագավորության վրա, կոտորում են ժողովրդին, ավերում քաղաքներն ու գյուղերը, ամայացնում վանքերն ու մենաստանները, իսկ 1170 թ. Բաղաբերդը գրավելով գերում և ցամուցիր են ամուս տապար հազար կտակարան: Դարավերջին Սյունիքի և Բաղրի իշխանությունը վերացնում են Սքրամամի վայրագ աղախնածին Ժնուանգները:

Անհա այդ ցիրուցան եղած կտակարաններից մեկում մի նվետարանում, հանդիպակաց էշերից ձախում Մարիամ Աստվածածինն է իր Սիածնի հետ, որը զբարելում է մարդկության փրկության համար, իսկ մյուսում Հայոց Սքրամամը՝ զոհաբերության նախապատրաստվելիս: Մարտեցուցիչ է նրա ձեռքի դանակը, որն ավելի շուտ սուր է հիշեցնում: Նկարում Սքրամամի հասակը 17 սմ է, Ծանհակինը՝ 10 սմ, սուրը 6 սմ երկարություն ունի: Այդ սուրը նրա աղախնածին ժառանգների ձեռքին է, որով հազարավոր անմեղ քրիստոնյացների արյուններ է հեղվել՝ մահ ու սարսու սփուելով շուրջըլորը: Ուստի կտրել են նրա դեմքը, դիմագրկել, որպեսզի միայն Աստվածամայրն իշխի էշաբացքում, իսկ սուրը քերել են ամրողացությամբ, չեն կտրել, որովհետև ադրահատվ կտրվել նկարը՝ լայնքով, իսկ մյուս էշից՝ մի քանի բառ: Այս գործողությունը կատարվել է 1173 թ. հետո, Մաղարդա Ս. Ստեփանոս վաճքում:

Տաթևյան տապ հազարամոց պահոցներից ցիրուցան արված մագաղաթյան աստյանների միջից բացառիկ երջաների ճակատագիր ունեցավ Հայկազն: Ստեփանոս կրոնավորի ավետարանը: Ոչինչ չկորցնելով՝ նա շահեց 6-րդ դարի մի հոշոտված ավետարանից երկու նկարազարդ թանկագին մասունքներ և դրանք ամրացնելով՝ մըխըրճինց դարերի խորքը, գգեստավորվեց նախորդի բախտին վիճակված մի ավետարանի փոխակրյա կազմով, որը նույնական է 6-րդ դարից: Ծուրջ ուժ դար 774 տարի, ապաստանեց Մայոց Արաքսի ափին ծվարած Շամբի ձորի Մաղարդա Ս. Ստեփանոս Նախավկայի վաճքում: 1847 թ. Ներսես Աշտարակեցի կաթողիկոսի կոնդակով տեղափոխվեց Մայոց Արտո Ս. Էջմիածնի մատենադարան: Զեռագիրն այսօր գտնվում է մայրաքաղաք Երևա-

⁴² Մատենադարան, ձեռ. № 2874, էջ 8:

⁴³ Նոյն տեղում, էջ 9:

նում, մեծ Մեսրոպ Մաշտոցի անոնը կրող Մատենադարանում:

Ահա պատեղ Եշմիածնի ավետարանը բրոյրում է իր հազարամյակը: Այսօր էլ այնքան ամոր է նրա ազնիվ մագաղաթը, այնքան հստակ ու հատուտ են հստած նրա վրա հայկական երկաթագիրն ու հայրենի գույները, որ այն փողովով հաստարեաս կազմով նորանոր հազարամյակեր կքայլի իր փառակոր ծողովընի մեռ:

Եշմիածնի ավետարանը մեզ համար նախ և առաջ բացահայտում է մշակույթային առաջնապարզ մի կենտրոն, որ ստեղծվել է Սյունիքում տասներորդ դարում և գործակցել ու շարունակույթունն է դարձել Նկամա կղզու և Տաթևի վանքի մշակույթին գորրնեղ կենտրոնների, որոնք ստեղծվել ու հզորացել են հայ իշխանական տների բարձրաստիճան հոգևորականների ջանքերով, որոնցում ուսմամբ, գիտությամբ ու գրչությամբ արվեստով են զրադշում: բազմաթիվ և բազմաբեղույն սպասավորներ:

Մաշտոց Եղվարդեցի վարդապետը Սեվանա կղզին վերածում է ճգնարանի, հիմնում է ուսումնարան, մատենադարան՝ «ստանալով զբազմութիւն գրոց սրբոց, զի լուսար եղիցի աչք ոգոց»⁴⁴: Սևանի մատենադարանը, որի գոյության մասին տեղեկություն ունենք հիմքերորդ դարից, հարստանում է առավելապես սուրբ գրքերի ընթօրինակույթամբ՝ Մաշտոց Եղվարդեցու դպրոցի սաների ջանքերով: Այդ ժամանակներից Սևանից մեզ ձեռագիր չի համար, նոյնիսկ Մաշտոցի խմբագրած «Մաշտոց» ժողովածուն մեզ է համել նրա սան և կենսագիր Մտելիանով:

ընդօրինակույթունից կատարված արտագրությամբ⁴⁵:

Տաթևում նոյնական շատ ձեռագրեր են ընդօրինակվել տեղի նշանակոր գրիշների և նաղկողների ջանքերով, բայց այդ ժամանակներից ել մեզ ձեռագիր չի հասկել: Նորավանքից մեզ է հասկել մի լրասիել ձեռագիր, որը ոչ միայն տեղի, այլ նաև իրեն հայուրդող և ժամանակակից գրչության կենտրոնների բարձր մակարդակի վկայությունն է: Անկական Նորավանքը է ունեցել է Սևանի և Տաթեւի վանքերի նման իր մատենադարանը, բայց որ, ինչպես միջնադարյան առածն է ասում, «Դպրոցը կատ վանքը մարդկային մատածումի մարտկոցն է, իսկ մատենադարանը՝ նրա զինարանը»: Որ Բղենու Նորավանքը ունեցել է մատենադարան, մեզ հուշում է Եշմիածնի ավետարանի գրիշ Հովհաննեսուր՝ գրելով, որ ինքը ձեռագիրն ընդօրինակել է ստոյգ և մին օրինակներից: Խակ այս վկայությունը ենթադրում է ձեռագրական հավաքածու, այսինքն՝ մատենադարան, որտեղից կարելի էր ընտրել ստոյգ և մին օրինակներ:

Ամենայն հավանականությամբ աս, ու մատենադարաններում են պահվել նաև փրուկոյա կազմով առաջին անգամ կազմված ավետարանը, որից փրկվել է միայն կազմը, ինչպես նաև այն ավետարանը, որից փրկվել են նկարազարդ երկու թերթերը: Այս մատածեների փրկութան մեծագույն ծառայությունը պատկանում է Եշմիածնի ավետարանին, որով այն դառնում է «Եղամեծ», մատունքներ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձնակի տեղը հայ ձեռագրական մշակույթի սրբազն տաճարում:

Եշմիածնն ու իր ավետարանը ամրապնդում են մեր հպարտությունն ու հավատը հայրենից, ժառանգություն ստացած «մեր պատահին ամենամեծ հարատության» Շկատմամբ՝ հավիտյան հավիտենից:

⁴⁴ Մատունադարան, ձեռ., № 970:

